ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«20» հուլիսի 2022 թվականի N 52-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 20-Ի ԹԻՎ 6 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 17-րդ հոդվածի պահանջով, համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնքի ավագանու 2022 թվականի հուլիսի 20-ի թիվ 6՝ արտահերթ նիստի օրակարգը՝

1) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնքի Ձորաղբյուր գյուղի գլխավոր հատակագծում փոփոխություն կատարելու մասին:

2) «ԿՄՋՀ-ԳՀԱՇՁԲ-22/24» ծածկագրով գնման պահանջը դադարեցված հայտատրարելու մասին:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

	կողմ (7)	դեմ (0)	ձեռնպահ (0)
ԱՐԿԱԴԻ ԳԵՎՈՐԳՅԱՆ			
ԳԱՅԱՆԵ ՄԵԼՔՈՒՄՅԱՆ			
ԳԱՍՊԱՐ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ			
ԳԱՐԻԿ ՄԿՐՏՉՅԱՆ			
ՆՎԵՐ ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ			
ԷԼԼԱ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ			
ՎԱՀԱԳՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ			

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2022 թ. հուլիսի 20
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«20» հուլիսի 2022 թվականի N 53-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՁՈՐԱՂԲՅՈՒՐ ԳՅՈՒՂԻ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԾՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 29-րդ կետի, «Քաղաքաշինության մասին» օրենքի 14^3-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 1920-Ն որոշման պահանջներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի N 1064-Ա որոշմամբ ստեղծված միջգերատեսչական հանձնաժողովի 2022 թվականի հուլիսի 15-ի N 1/փ-146 դրական եզրակացությունը, համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Հավանության տալ Ջրվեժ համայնքի Ձորաղբյուր գյուղում գտնվող՝ «Կառլենա Շին» ՍՊԸ-ի սեփականությունը հանդիսացող 07-042-0401-0081 կադաստրային համարի 5,3811 հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության հնդավոր այգուց 0,57 հա մակերեսով հատվածի և 07-042-0401-0082 կադաստրային համարի 5,0 հա (որից 0,14822 հա մակերեսով հատվածը հանդիսանում է արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական՝ գյուղատնտեսական արտադրական օբյեկտների հողեր, իսկ 4,85178 հա մակերեսով հատվածը հանդիսանում է գյուղատնտեսական հնդավոր այգի) հողամասի նպատակային նշանակությունը բնակավայրի բնակելի կառուցապատման հողերի կատեգորիա փոխադրելուն:

2. Հայաստանի Հանրապետության Ձորաղբյուր համայնքի ավագանու 2012 թվականի հուլիսի 2-ի «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ձորաղբյուր գյուղական համայնքի պարզեցված գլխավոր հատակագիծը հաստատելու մասին» թիվ 19-Ն որոշմամբ հաստատված հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունը.

1) «ԳԻՐՔ 1. ՀՀ Կոտայքի մարզի Ձորաղբյուր գյուղական համայնքի պարզեցված գլխավոր հատակագիծ, տեքստային մաս» «Գլուխ 2. Ձորաղբյուր գյուղական համայնքի գոտևորման նախագիծ» «5. Գոտիներում թույլատրելի օգտագործումների (կառուցապատումների) և սահմանափակումների հիմնավորումները» բաժնի «5.1.Նախագծով սահմանված գոտիները» կետի «5.1.1. Անհատական բնակելի կառուցապատման գոտի (ԱԿԳ)» ենթակետում «*Նոր կառուցապատման նպատակով տրամադրվող տնամերձ հողամասերի միջին չափը՝ 500 – 1500 քառ.մետր, հողամասի ճակատի նվազագույն լայնությունը՝ 10,0 մետր, հողամասի անբաժանելի մասը՝ 500 քառ.մետր:» բառերից հետո լրացնել **«, նոր կառուցապատվող հողամասի նվազագույն մակերեսը 500,0 քառ.մետր, իսկ 07-042-0401-0082 կադաստրային ծածկագրով 5,0 հա մակերեսով հողամասի նվազագույն չափը՝ 210,0 քառ.մետր**»:

2)«ԳԻՐՔ 1. ՀՀ Կոտայքի մարզի Ձորաղբյուր գյուղական համայնքի պարզեցված գլխավոր հատակագիծ, տեքստային մաս» «Գլուխ 2. Ձորաղբյուր գյուղական համայնքի գոտևորման նախագիծ» «7.Կառուցապատման կանոններ» բաժնի «Կառուցապատման չափորոշիչներ ըստ առանձին գոտիների» Աղյուսակ 2-ից հետո լրացնել հետևյալ նոր պարբերությունը՝

«իսկ 07-042-0401-0081 կադաստրային համարի 5,3811 հա մակերեսով հողամասից 0,57 հա մակերեսով հատվածում, 07-042-0401-0082 կադաստրային ծածկագրով, 5,0 հա մակերեսով հողամասում աղյուսակ 2-ում նշվածից բացի թույլատրել կառուցել 4-7 հարկանի (ներառյալ 7-րդ հարկը) բնակելի շենքեր»:

3. Առաջարկել համայնքի ղեկավարին՝ հողամասի նպատակային նշանակության փոփոխությունը օրենքով սահմանված կարգով պետական գրանցում ստանալուց հետո ընդգրկել համայնքի հողային ֆոնդի տարեկան ընթացիկ հաշվառման տվյալներում և համայնքի հողային հաշվեկշռում:

	կողմ (7)	դեմ (0)	ձեռնպահ (0)
ԱՐԿԱԴԻ ԳԵՎՈՐԳՅԱՆ			
ԳԱՅԱՆԵ ՄԵԼՔՈՒՄՅԱՆ			
ԳԱՍՊԱՐ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ			
ԳԱՐԻԿ ՄԿՐՏՉՅԱՆ			
ՆՎԵՐ ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ			
ԷԼԼԱ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ			
ՎԱՀԱԳՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ			

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2022 թ. հուլիսի 20
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«20» հուլիսի 2022 թվականի N 54-Ա

«ԿՄՋՀ-ԳՀԱՇՁԲ-22/24» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ ՊԱՀԱՆՋԸ ԴԱԴԱՐԵՑՎԱԾ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ջրվեժի համայնքապետարանի կողմից հայտարարված «ԿՄՋՀ-ԳՀԱՇՁԲ-22/24» ծածկագրով հրավերի ծավալաթերթ-նախահաշվում և թիվ 1.1՝ սարքերի և սարքավորումների նկարագրում լուսատուի տեխնիկական բնութագրում ի հայտ է եկել վրիպակ և ղեկավարվելով «Գնումների մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի և Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2022 թվականի մայիսի 31-ի N 235-Ա հրամանով հաստատված հրավերի 1-ին մասի 11.1 կետի 2-րդ ենթակետի պահանջներով, համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Դադարեցնել «ԿՄՋՀ-ԳՀԱՇՁԲ-22/24» ծածկագրով համայնքի կարիքների համար «Արտաքին լուսավորության ցանցի կառուցման աշխատանքների ձեռք բերման» գնման պահանջը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

	կողմ (7)	դեմ (0)	ձեռնպահ (0)
ԱՐԿԱԴԻ ԳԵՎՈՐԳՅԱՆ			
ԳԱՅԱՆԵ ՄԵԼՔՈՒՄՅԱՆ			
ԳԱՍՊԱՐ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ			
ԳԱՐԻԿ ՄԿՐՏՉՅԱՆ			
ՆՎԵՐ ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ			
ԷԼԼԱ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ			
ՎԱՀԱԳՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ			

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2022 թ. հուլիսի 20
գ. Ջրվեժ